ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ներկայացուցչի՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ից 6-ն ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակիցների անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոնը.

▪ Հակոբ Մանուկյան – Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք, 2024 թվականի դեկտեմբերի 4-ից 6-ը:

3. Հրավիրող կողմը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Հակամենաշնորհային կարգավորման բաժին:

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Մրցակցային իրավունքը ԵԱՏՄ տարածքում. միջազգային և տարածաշրջան» լրացուցիչ կրթության ծրագրին:

5. Գործուղման արդյունքները.

Ծրագրի հիմնական նպատակն էր տնտեսավարող սուբյեկտների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ԵԱՏՄ անդամ պետությունների մրցակցային մարմինների ներկայացուցիչների համատեղ դասընթացի կազմակերպումը՝ ուղղված մի կողմից ապահովելու եվրասիական հակամենաշնորհային իրավունքի վերաբերյալ բավարար տեղեկացվածությունը, մյուս կողմից համատեղ քննարկումների արդյունքում կիսվելու եվրասիական ինտեգրացիայի զարգացման և հեռանկարների վերաբերյալ փոխադարձ պատկերացումներով:

Դասընթացի բովանդակային հատվածը պարունակում էր նյութեր եվրասիական միջազգային մրցակցային իրավունքի և ազգային օրենսդրության համեմատության, մրցակցության զարգացման և մրցակցային մշակույթի ձևավորման, ինչպես նաև միջազգային իրավունքի առկա տենդենցների վերաբերյալ:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները.

Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ զարգացնելու ««Մրցակցային իրավունքը ԵԱՏՄ տարածքում. միջազգային և տարածաշրջան» լրացուցիչ կրթության ծրագրին ԵԱՏՄ անդամ երկրների մասնակցության հնարավորությունները:

Հանձնաժողովի միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման և մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ — Հակոբ Մանուկյան

12.12.2024 թ.